Փուճջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի. — Տարեկան բաժանորդագինն է երկու եւ կէս արծաթ Մեճիտ կանխիկ վճարելի, թէ՛ մայրաքաղաքիս եւ իր արուարձանաց եւ թէ՛ գաւառաց համար: — Վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կրնդունուի: — Հատը 40 փարայ է, եւ կը գտնուի մասնաւորապէս Պանչէ-Թաբու ջրավաճառ. եւ գրավաճառ Նշան աղայի խանութը: — Ծանուցմանց տողը 3 դրշ. է մէկ անգամի համար: Աւելի աժան կ'ըլլայ աւելի անգամներու համար:

ՀԱՍՑԷ

Ս.ը Տնօրէնը—Տէր Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

Պալըզ—Բազար Նաֆիյէ խան վերի յարկ թիւ 16

ՓՈՒՆՋ

درعليه‌ده بالق پازارنده نافعه خانينده اوست قاتده

١٦ نومرولى اوطه‌ده «پونچ» غزته‌سى صاحب امتيازى

همپارسوم آلاجاجيان

ADRESSE

H. S. ALADJADJIAN

Directeur du Journal Armenien

POUNTCH

16 Nafié—Han Balouk—Pazar 16

CONSTANTINOPLE

ԹԻՒ 2782 ՇԱԲԱԹ 1863—1866—1902 ՄԱՐՏ 30

ԹՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՋԻ

ՆՈՐ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՄԸ

Մեր Ուսումնական Խորհրդոյ, մեր վարժարանաց հոգաբարձութեանց ուշադրութիւնն հրաւիրենք անցեալները՝ կրթական նախարարութեան մէկ շրջաբերականին վրայ, որով կը պատուիրէր՝ վարժարանաց մէջ ո՛ր և է պաշտօն չըտալ ղեղծ վարք ու բարք ունեցող անձանց, և անյապաղ արուարձել եթէ արդէն ընդունուած են այդպիսի վատաբարոյ անձինք, և ուսանողաց չար օրինակ կ'ըլլան:

Դարձեալ՝ մեր կրթական վերակացուաց ուշադրութիւնը իրենց ըսկինք նոյն նախարարութեան կողմանէ հետզհետէ արուած շրջաբերականաց վրայ, որով կը պատուիրէր՝ վարժարանաց մէջ ամէն ուսումներէ, ամէն գիտութիւններէ, ամէն լեզուներէ նախադասել կրօնի ու բարոյականի կենցաղօգուտ ու չինիչ ուսումները:

Այսօր՝ նոյն նախարարութեան կողմանէ նոր շրջաբերական մ'ալ եղած է, որով կը պատուիրուի որ՝ վարժարաց մէջ ո՛ր և է պաշտօն ունեցող անձինք սրճարանաց և այլ հանրային վայրաց մէջ նարա, թաւլի, հայլն, չխալան, որ լաստպաւորութիւն չբներ ուսանողաց ու ծնողաց վրայ:

Այսո՛ր այս նոր շրջաբերականն ալ մեր վարժարանաց վերակացուաց ուշադրութեան ու գործադրութեան արժանի կը համարինք:

Պատրիարքարանի, կարնուսմանական խորհրդոյ կողմանէ արդեօք ի՞նչ տնօրինութիւն եղաւ՝ Ֆղիի խուլիա գիւղի վարժարանի ուսուցչին համար, որ չէ թէ դուրսը սըրճարանի մէջ, այլ նոյն իսկ վարժարանին մէջ ուսանող տղայոց հետ թաւլի կը խաղայ և անոնց գրամիները կը շորթէ, որ մայրաքաղաքէս մեծ դժուարութեամբ հայաթայֆուած դրկուած գասագիրքերն, իրեն տրուած պատուէրին հակառակ՝ փոխանակ ուսանողաց ձրի բաժնելու՝ կը վաճառէ, դրամը կ'իւրացնէ, և իր այս ծանրը յափշտակութիւնը բացարձակ կը խաւարման անամօթաբար, իբրև արդարացուցման առարկութիւն մէջ բերելով իր ընտանեաց բազմանդամութիւնն և իր անապահովչակին նուաստութիւնը: Այսպիսի անձ մը՝ վարժարանի մէջ երբեւ ուսուցիչ վայրկեան մը իսկ պահել վայե՞լ է:

Եւ ահա այս առթիւ դարձեալ կառաջարկեմք մեր Ուսումնական Խորհրդոյ, որ անհապաղ քննութեամբ մեր վարժարաններէն արտաքսէ յոռի վարք ու բարք ունեցող անձերն, որ կրօնի ու բարոյականի ուսման համար ըստ արժանւոյն հոգ ու խնամ տանի, որ՝ վարժարանաց մէջ պաշտօն ունեցող անձանց՝ արուարքոյ վարժարանաց ալ բարուք վարմանց կարեւորութիւն տայ:

Տակաւին կա՞յ ոմանց սա՛ այլանդակ վարդապետութիւնը թէ՝ կրթական ո՛րեւ է պաշտօնեայ վարժարանէն դուրս աղատ է իր ուզածին պէս վարուիլ, և ո՛չ ոք իրաւունք չունի մեզադրել կամ յուղութիւն կոչել զանի:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՋԻ

ԷԼՊԻՍՏԱՆ. *12 Մարտ 1902:* — *Տարօրինակ մանուկ մը եւ զանազան յուշեր:* = Մեծ պահոց առաջին շաբաթ Ս. Թէոդորոսի տօնի օրն՝ չնորհաւորութեան առթիւ ազգայիններէն մէկուն բնակարանը ներկայանալու պարտաւորելով, անդ դիտելու պատեհութիւնն ունեցանք սա հետաքրքրական և զարմանալի տեսարանը: Մէկ տարեկան մանուկ մը՝ օրօրանին իր ձեռքով շարժելու սովորած՝ «Մայրիկ մայրիկ» կանչելով մինչ քնացած պահուն լինքնաբերաբար կ'օրօրէին լինքնիքը: Հետաքրքրութեամբ հարցուցի թէ միշտ այսպէս կը շարունակէ՞, պատասխան ընդունելի թէ վեց ամսուան ըլլալէն ի վեր ուրիշներ բնաւ ձեռք չեն երկարած օրօրանին, և թէ երբ կաթ ուղելու ըլլայ՝ ձեռքը ծածկոցէն դուրս կը հանէ. այս է նոթութեան նշանն: Օրօրանն գետնի վրայ շարժող վայտաչէն պարզ օրօրան մ'է: = Տեղւոյս և շրջակայ գիւղօրէից ժողովրդեան համար արագիլի գալուստն գարնան առաջին նշանակն է. ամսոյս սկզբի օրն տեսնուեցան երկու երեք արագիլներ, յետ այնու կ'երեւին օր ըստ օրէ իւրաքանչիւր դաշտի մէջ ուր 3 և ուր 5 հատ արագիլներ: Որովհետև տեղս ընդհանրապէս դաշտային է, արագիլներու բազմութիւնն գեղեցիկ տեսարան մը ընծայելով՝ կը լեցնէն այգիներն ու պարտէզները, և դաշտերու ցորենի կանխահաս գալարագեղ կանաչութիւնը՝ ծիծեռնակներու և այլ սիրուն թռչնոց բերկրաւէտ գեղգեղանքներն մարդոց սիրտն ու հոգին ղուարթացնելու սկսած են արդէն: = Բարեկենդանի օրերուն մէջ Կիւրինդի Աճէլեան Աբժ. Եղիա քահանային խոստումն ըրած ըլլալ՝ Մեծ Պահոց կիւրակէներու մէջ ըստ սովորական պատշաճի անընդհատ քարոզէ, հարկ եղած հոգեկան և բարոյական խրատներն ընծայելով ժողովրդեան, նոցա խմացական զգացումները արթնցնելու՝ և զգացնելու Հարկը զայնս: Ըստ իւր խոստմանն՝ Փառատօրդաց Բ. կիւրակէ օրն, առաւնաւոսեց հետագայ Աւետարանական նախադասութեան վրայ: «Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս և զմարգարէս. ո՛չ եկի լուծանել, այլ լնուլ»: = Նմանապէս Մարտ 10 կիւրակէ օրն ըստ եկեղեցական կանոնի հանդէս արարողութիւնները կատարելէ վերջ, Ս Պատարագ ալ մատուցանելով՝ պարզ բայց ազդեցիկ ոճով մը քարոզել սկսաւ բնաբան առնելով ճաշու Աւետարանի մէկ պարբերութիւնը «Ընդէ՞ր զմաքսատուրս և զվեղատուրս ընդունի և ոտէ»: Հաստատեց և շեշտեց որ այս քրէական անխոհեմ քննադատութիւնները յարաժամ մեզ եւս ըրած ենք և կ'ընենք, դատափետելով մեր նմանները՝ կը դատենք կը դատապարտենք անխորհուրդ վճիռներ արձակելով նոցա համար՝ հակառակ աւետարանական անժրիտելի ճշմարտութեան և քրիստոնէական վեհ ու վսեմ կրօնի և պարտաւորութեանց: — Հովուական գործը առաւել արական սեռի յատուկ և գիւրըմբռնելի առուեստ մը ըլլալուն համար՝ խօսքը հայ եղբայրներու ուղղելով՝ չինիչ բացատրութիւններով պարզելով Տեառն Յիսուսի մտերիմ ոչխարին համար արտայայտած սքանչելի առակն, ըստ արժանւոյն զգացուցած հովուին ընթացքը բնական նպատակ այնպիսի պարագայի մէջ տակ, մտերիմ ոչխարի մը նկատմամբ, այսու աւելնայնիւ նորա ուղեցած տարօրինակ ցնծութիւնն ղայն գտնելու ժամանակ: — Աւետածուի պաշտօնն աւելի իգական սեռին յատուկ և պատկանեալ գործ մը ըլլալուն՝ նոցա պճնասիրութեան և զարդուց նկատմամբ անեցած անկ ու բաղձանք ի յայտ ածելով՝ խօսքը ուղղեց այս վերջիններուն և տեղական ոճով և բարբառով հասկցուց թէ քանի՛ կը չանան կը տքնին անձամբեր մինչ գտնելու ըլլան իրեանց կորուստն: — Ցետ այսու անցնելով Անառակին Առակին, եւանդագին պարզեց ճոխ բացատրութիւններով, տպատուելով ժողովրդեան սրտերուն մէջ, և յարեց թէ ըստ անառակին՝ միշտ յամառ ընտանութեամբ և անխոհեմութեամբ կը կը դործ ապրիմք մեր առաջնորդներն և ատոր համար կը տուժ ժամբ ու կը կորնչանիմք: = Ձի՛շդ այդ պահուն էր որ տակաւ առ տակաւ կ'ղգացնէր ժողովրդեան՝ նոցա առ սիրահատոր հայրական խնամք

— Բաքերդի առաջնորդական տեղապահ Գեր. Տ. Աբիստակես վարդապետ՝ վիճակին գաւառական ժողովը կազմեր, և Պատրիարքարանի հաղորդեր է վաւերացման համար։

— Երեւանի վաճառականներէն Ներսէս Թայիրեան՝ որ մօտերս վախճանած է, Երեւանի թեմական դպրոցին համար կտակեր է շարժական ու անշարժ ստացուածքը (140 հազար րուպլի արժէքով), իսկ կնոջն ու ազգականաց համար՝ 30-40 հազար րուպլի չափ։ Հանգուցեալն՝ մտաւորական ղարգացման նպատակաւ մեծ գումարներ ալ տուեր է։

— Նիւ Եորքի մէջ թատերական մը ներկայացուեր, և հասոյթին կէսը՝ 20 անգլիական ոսկի՝ Պատրիարքարան ղրկուեր է կարեւոր հարցերու կարօտելոց համար։

— Տիկին Եպրոս Պէկեան՝ Պիլեճիկի առաջնորդ Գեր. Տ. Մովսէս Սրբազանի քոյրն՝ անցեալ շաբաթ օր կնքից մահկանացուն, և հետեւեալ օրը յուղարկաւորութեան հանդէսը կատարուելով Բերա՝ մարմինը Շիշլիի գերեզմանատան մէջ ամփոփուեցաւ։

— Էջմիածնի Ս. Հայրապետը՝ 10 օսմ. ոսկի ղրկեր է Պատրիարքարան, Սահակ Հայրապետի մատեան նորոգութեան համար։

— Էնկիւրիի նորընտիր Առաջնորդ Գեր. Տ. Եղիշէ վարդապետ Գալֆեան՝ երէկ առաւօտ ուղեւորեցաւ պաշտօնավայրն։

— Երուսաղէմ գացող Հայ ուխտաւորաց թիւն՝ 700 եղեր է մինչեւ մօտ օրերս։

— Դահիրէէ՝ Մխէրան էֆէնտի Գալֆեան 20 օսմ. ոսկի ղրկեր է Պատրիարքարան, կարիոյ չարժէն կարօտելոց համար։

— Հապէշոյ Թագաւորին եղբօրորդի Լիւքամլաքուաս իշխանը՝ երուսաղէմեայ Հապէշոյ հոգեւոր պետին ու իտալական հիւպատոսարանի թարգմանին հետ այցելեր է Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր։

— Թառն նիաս ըրին երէկ կրօնական ու քաղաքական ժողովոյ անդամոյ ոմանք, և հետեւեալ որոշումներն ըրին։ — Սկերդի առաջնորդական ընտրութիւնը յանձնին Տ. Փառէն վարդապետի, իբրեւ օրինաւոր՝ վաւերացաւ, և չընդունուեցաւ անոր հրաժարականը։ — Որոշուեցաւ դրել ի Մուշ, որ տեղւոյն կրօնական ու քաղաքական ժողովներն ընտրութենէ եառքը՝ առաջնորդական ընտրութեան հրահանգ ու ընտրելեաց ցանկ ուղարկեն։ — Որոշուեցաւ յանձնարարել Կարնոյ Առաջնորդին, որ վարդապետ մը ղրկէ Բիլ, և տեղական ժողովոց կազմակերպութենէն եառքը առաջնորդական ընտրութեան հրահանգ տրուի։ — Յակոբեան Վահան վարդապետի հրաժարականն ընդունուեր, և որոշուեր է՝ Պուլղարիա ղրկել զանի, թաղական խորհրդոյ ընտրութենէ եառքը առաջնորդական ընտրութիւն կատարել տալու պաշտօնով։ — Պայպուրտի գաւառական ժողովոյ ընտրութիւնը ապօրինի համարուեր, և որոշուեր է դրել որ նոր ընտրութիւն կատարուի։

— Զմիւռնիոյ Առաջնորդ Տ. Մեկլքիեդեկ Սրբազան՝ ուրիշ հոգեւոր պետերու հետ ներկայ դըներուեր է անգլիական տաճարի մը բացման հանդէսին։

— Կրօնական ժողովին՝ ըստ տեղեկագրի Սամսունի Առաջնորդականի՝ կրկնամուսնութեան հրաման տուեր է հինգ մը, որ տարիէ մը հետէ պատճառած է եղեր ամուսնութեան անընդունակ անձի մը հետ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ելմիոց պաշտօնատունը՝ կայաերական հրամանատ, երկուշաբթի կըսկսի ընդհանուր ատաթոշակ մը վճարել։

— Անատոլուի երկաթուղւոյ ընկերութեան վարչական ժողովոյ նախագահ Պ. Զանտէր՝ ընկերութեան ընդհանուր անօրէնն անուանուեր է, և երկրորդ նախագահ Պ. Հիւկնէն՝ ընդհանուր անօրէնի օգնական։

— Իմացուելով որ՝ մաքսային պաշտօնատան գրական ու տումրական պիտոյից նուազագրդի գործին մէջ ղեղծումներ եղած են, քննութիւն բացուած է։

— Մայրաքաղաքիս ռուսական նորընտիր դեսպան Պ. Լահովարի՝ երկուշաբթի առաւօտ մայրաքաղաքս եկաւ, և սովորական արարողութեամբ ընդունուեցաւ կառավարութեան ու դեսպանատան պաշտօնէից կողմանէ։ Նոյն օրը այցելեց արտաքին գործոց նախարարին, և յանձնեց պաշտօնագրոյ պատճէնը։

— Ամէնքի օսմանեան դեսպանը՝ անցեալ երկուշաբթի երկար տեսակցեր է Յունաստանի նախարարապետին հետ։

— Կրետէի մահմետական ըռեւելիք՝ յանձնաժողով մը կազմեր են՝ հիճազի երկաթուղւոյ չինութեան ծախուց ի նպաստ հանգանակութեան համար։ Այս կղզւոյն մէջ՝ Գուբրանի ոտնի առթիւ զոհուած ոչխարաց մորթերն հաւաքուելէ վաճառուելու են միեւնոյն նպատակաւ։

— Սամսունի ամերիկեան հիւպատոսարանի թարգման կարգուեցաւ՝ Եըլանճեան Տիգրան էֆէնտի։

— Յունաց Պատրիարքը 500 գաղղիական ոսկի նուիրեր է՝ Պօյաճը գիւղի մէջ արական վարժարանի մը չինութեան համար։

— Օլտէնպուրկի մեծ դուքս Փրէտերիկ Օկիւսթ՝ որ անցեալ շաբթու մայրաքաղաքս եկած էր ամուսնոյն ու դստերն հետ, իբր Լէյչեան անուն զբօսանաւով, — երբ քշաբթի մեկնեցաւ ուղեւորեցաւ ի Պիրէոն։ Օգոստ. Սուլթանը մեծարեց այս բարձրապատիւ այցելուներն, ճաշի հրաւիրեց, պատուանշաններ և ընծաներ տուաւ։ Մեծ դուքսն ալ՝ փոխադարձաբար՝ Մէրիմի որ լա Մէզոն տ'Օլէնպուրկ ականակուռ պատուանշանը մատոյց Նորին կայսերական Վեհափառութեան, և զանազան աստիճաններէ պատուանշան՝ կայսերական պալատան կողմանէ իրեն հիւրամեծար կարգեալ անձանց։ Շերբէլեցաւ մայրաքաղաքիս նշանաւոր հասատատութիւններն ու մեծ շուկային և դոհարեղէններ ու հնութիւններ գնեց։

— Իզմիտի գաւառի մէջ, երկրագործութեան առաւել ևս զարգացման համար, կառավարիչ Մուսայ Բեազիմ պէյի նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուեր է, և անդամ ընտրուեր են Թիւրապեան Ձիվան ու Էլմասեան Միհրան էֆէնտիները ալ։

— Պ. Պլան՝ Իզմիրի, և Պ. Տըրուի՝ Հանեայի գաղղիական ընդհանուր հիւպատոս անուանուեր են։

— Էսկիշէհիրի երեւելիներէն հաճի Էհէմ պէյ՝ երբ գիշերը առտեն սրճարանէ տուն վերադարձեր է, վեց հոգի անոր վրայ յարձակեր սպաններ, և ոսկի ժամացոյցն ու դրամարկղին բանալին յափշտակեր են։ Սակայն դրամարկղը կանանոցին ըղլալով՝ չեն համարձակեր կանանոցը երթալ։ Այս մարդիկը Էհէմ պէյի վերադարձէն առաջ տունը մտած, և սպասաւորները կապած ու անոնց բերանները գոցած են եղեր։ Տեղական կառավարութիւնը բանտարկեր է քանի մը կասկածելի մարդիկ։

Պատուանշան, առիթաւ եւ պաշտօն։ — Տրամայի կառավարչութիւնը՝ երբեմն Սէնիչէի կառավարիչ Զըյա փաշայի։ — Մէնթէշէի կառավարչութիւնը՝ երբեմն Մարաշի կառավարիչ Ղալիպ փաշայի։ — Սրբիպղագոսի կղզեաց նահանգի Միս գաւառակի գայմագամութիւնը՝ էթրանոսի գայմագամ Իպրահիմ էհէմ էֆէնտիի։ — Պրուսայի նահանգի էթրանոս գաւառակի գայմագամութիւնը՝ Գուրուչայի գայմագամ Մէհմէտ Ալի պէյի։ — Սըվասի նահանգի Մէհիսիւզիւս գաւառակի գայմագամութիւնը՝ Համիտիյէի գայմագամ Խալիս պէյին։ — Համիտիյէի գայմագամութիւնը՝ Մէհիսիւզիւի գայմագամ Սայիտ պէյի։ — Պիղայի նորակազմ գաւառի Պայրամիչ գաւառակի գայմագամութիւնը՝ երբեմն Բիլանի գայմագամ Ազիզ Բիզա էֆէնտիին։ — Երկրորդ աստիճանի Օսմանիյէ՝ կայսերական կալուածոց վարչութեան հաշարակալութեան դպրոցի քարտուղար Կարապետ էֆէնտիի։ — Ինգլարէի նահանգի Մխիալըճըզ գաւառակի գայմագամութիւնը՝ Գարաճասուի նախորդ գայմագամ Մուսթաֆա Թեվֆիգ պէյի։ — Սրղընի գաւառի կառավարչութիւնը՝ եչմէկ գաւառակի գայմագամ Հիւսամէտտին պէյին։ — Տիարպէքիրի նահանգի տոմարակալութիւնը՝ Մամուրէթ իւլ Ազիզ նահանգի տոմարակալ Նիհատ էֆէնտիի։ — Այդընի նահանգի Սիֆրիհիսար գաւառակի գայմագամութիւնը՝ Գարաճասուի գայմագամ Ալի Սաղրի էֆէնտիին։ — Գարաճասուի գայմագամութիւնը՝ Սիֆրիհիսարի գայմագամ Ահմէտ Խալիտ պէյին։ — Երկրորդ աստիճանի Օսմանիյէ՝ Իզմիրի վաճառականներէն Նալպանդազատ Արիստոտէլի էֆէնտիին։ — Հիճազի երկաթուղւոյ ոսկի չգրամ Տրապիզոնի կուսակալ Թաարի պէյի, և նոյն երկաթուղւոյ նիքել չքգրամ՝ գլխաւոր Գոնսուլքէէր Ճակոբ, և Կիւրասունի գաւառակի Գրիդ գիւղախմբի Միւսիր Բիւէր էֆէնտիներուն։ — Կիւմիւշխանէի կառավարչութիւնը՝ Ամասիոյ կառավարիչ Հիւսնի պէյի, որուն յաջորդեց Կիւմիւշխանէի կառավարիչ Իպրահիմ Մուխլիս պէյ։ — Սըվասի նահանգի Հավզա գաւառակի գայմագամութիւնը՝ Հալէպի նահանգի Սրուճ գաւառակի գայմագամ Ասլա իւլ Բահման Նայիլի էֆէնտիի, որուն յաջորդեց Գարաքիլիսէի նախորդ գայմագամ Իպրահիմ Նէճաթի էֆէնտիին։

Լրագրոյս թերթի թիւն՝ 2779 էն սկսեալ՝ 20 թիւ սելամլըճ ասելի նըշանակուած ըլլալով՝ այս թուով ուղղուած է։ Հետեւաբար՝ նախորդ թիւը պիտի ըլլայ 2781, և նախկինը՝ 2780։

ԿԸՆԴՐՈՒԻ

Լրագրոյս հետ բաժանորդութենէ հրաժարիլ ունեցողներէ՝ ԱՆՅԱՊԱՂ վճարել։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թրանսվալի անկեալ հանրապետութեան նախագահ Պ. Քրիւգերի երէց որդին՝ անգլիացւոյ անձնատուր եղեր է։

= Հարաւային Աֆրիկէէ անգղիացի պաշտօնէից արտաքսած 18 ռուսաց՝ 16178 րուպլի վճարուեր է իրը փոխարինութիւն։

= Փարիզի մէջ արհեստական առարկայից հանդիսարան մը բացուած է այս օրերս, ուր ի տես դրուածները վիճակահանութեան դրութեամբ՝ արդիւնքը պիտի յատկանայ պօէր կանանց ու տղայոց։

= Բէլգիոն մէջ չորս անգղիացի զինուորք՝ սուիններով ծանրապէս վիրաւորուեր են քանի մը գաղղիացի ու գերմանացի զինուորներէ, և այս դէպքին տեղի տուեր է՝ գինետան մը մէջ պատահած կռիւ մը։

= Ճարմնի կայսրն, իննսուներեք հազար հրամանագրով մը 9000 հոգի պակսեցուցեր է երկրին քաղաքային պաշտօնեաներէն։ Այս թիւն՝ ընդհանուր թուոյն 100ին 14ն է։

= Պիրմինիոյ Ռանգուն քաղաքէ ծանուցուած է թէ՝ խումբ մը գինեաւ չինացիք սահմանադըլին անցած, Պհամոյի մէջ անգղիական հպատակ չինացի մը բըռնեց տարաւ և գլխատեց։

= Մարոքի կառավարութիւնն ի պաշտօնէ ազդարարեր է տերութիւններն թէ՝ իրեն կը վերապահէ ազատ նաւադնացութիւնն արդիլելու իրաւունքն, 3 ամիս առաջ ծանուցանելու պայմանաւ։

= Ճարմնի Փուգու քաղաքն՝ որ 4000 տունէ կը բաղկանար և ժողովուրդն ընդհանրապէս մեատքի գործերով կը զբաղէր, բոլորովին այրեցաւեր եղեր է։

= Անգղիոյ կառավարութիւնը հրայանի բռներ է երկու աւտարաւթացի սպայ, որ պօէր դերիներ ըսպաներ էն։ Ուրիշ երկու սպաներ ալ մշանչենաւոր տաժանակիր աշխատութեան դատապարտուեր են՝ նոյն պատճառաւ։

= Անգղիոյ կառավարութիւնը նոր դրամ և թղթադրամ հանեց։ Նոր դրամներուն մէկ երեսը Էտուարտ թագաւորին պատկերը կայ՝ բոլորտիքը տէտողանութիւնով։

= Պէլճիկէ կը հեռագրեն թէ՝ Գերմանիոյ, Հոլանտիոյ ու Ռուսիոյ մէջ ռուսական 393 միլիոն ֆրանքի փոխառութեան հարիւրապատիկն ստորագրեցին։

= Սերպիոյ ազգային ժողովը մէկ միլիոն ֆրանք որոշեր է՝ խաղաղութեան ժամանակի բանակին սպայից թիւն աւելցնելու համար։

= Աւստրիոյ կառավարութիւնը որոշած է՝ աւելցընել թնդանօթաձիգները։

= Պուլղար լրագիր մը կը գանգատի թէ՝ Սօֆիայի պահապան զօրաց տրուած հացը կղմինարի գոյն ունի։

= Պուլղարիոյ ոստիկանութիւնը Ալէքսի Բալովիչ անուն սերպ մը բռներ է, որ Սօֆիայի մէջ 10 ռանպիմոյ նիքել դրամներըն կը նեղդէ եղեր։

= Անգղիական մեծ տորմիղ մը՝ 94 նաւերէ բաղկացեալ, առաջիկայ ամսոյ 3ին Անգղիայէ Մէնէրկական գալով՝ մարզանքներ ընելէ եառքը՝ Յունաստանի Զանթա կըղզին ալ պիտի երթայ թնդանօթի փորձեր պիտի կատարէ։ Այս նաւատորմիղը Միջերկրականի քանի մը նաւահանգիստները պիտի հանդիպի։

= Անգղիոյ Աղատական կուսակցութեան պետ Լորտ Ռիմպըլտի, որ ժամանակէ մը ի վեր հիւանդ էր, և որուն մահուան վրայ ծանրացած էր հիւանդութիւնը, մեռաւ։ 1826ի Յունուարին ծնած էր, և 1847 ին ամուսնացած էր։ Զարգացած ու ճարտարախօս էր։ Զանազան բարձր պաշտօններ վարած, արդիւնաւոր հանդիսացած ու հըռչակուած էր։

= Սօֆիայի մատերը, ռումանիացի Նիքոլա Միհանօֆ-չօլագ անուն հասուռ մը՝ պանդոկի մը մէջ ճաշելու առեն, դրսէն արձակուած գնդակով մը սպանուեր, և ոստիկանութիւնը կասկածելի գիւղացի մը բռներ է։

= Փարիզէ տրուած հեռագրէ մը կ'իմացուի թէ՝ Հոլանտայի նախարարապետն՝ որ Պէրլին գացած էր և վերադարձաւ, ըսեր է թէ՝ Պոէրները կրնան 10 տարի ալ պատերազմիլ։

= Անգղիոյ գինուորական պաշտօնատունը հերքեր է այն ղրոյցը թէ՝ մօտերս հաշտութիւն պիտի ըլլայ անգղիացւոց ու Պօէրաց մէջ։

= Գերմանիոյ նախարարապետը՝ իտալական լրագրի մը թղթակցին հետ տեսակցութեան ատեն ըսեր է. — "Քաղաքական հորիզոնին վրայ սև կէտեր նշմարել՝ չատ մօտաբերտ չեմ համարիր. Ծանրութեան ու հակակշռի սա՛ մեքենականութեան մէջ՝ որ եւրոպական քաղաքականութիւն կը կոչուի, մօտաւոր փոփոխութեան մը յայտարար բան մը չեմ տեսներ, սակայն՝ ասկէց չհետեւիր թէ՝ նաւատորմիղներն աչալուրջ գտնուելու չենք"։

= Անգղիոյ գինուորական պաշտօնատունը՝ նորաձեւ օդապարիկ մը հնարող Տօքթոր Պարթքնի պատուիրեր է չինել հատ մը։ Այդ օդապարիկը կրնայ 7 հոգի առնուլ իր մէջ։

= Ռուսիա՝ Պարսկաստանի մէջ Անգղիայէ աւելի ազդեցութիւն ունենալու մրցման մէջ կը յաղողի։ Թէհրանի անգղիական դեսպանը Շահին ու մեծ եպարքոսին առաջարկեր է՝ Անգղիայէ փոխառութիւն մ'ընել, և այս առաջարկութիւնը գրեթէ ընդունուելու վրայ է եղեր, ռուսական դեսպանը միջամտեր և յաղողեր է հաճեցընել որ փոխառութիւնը Ռուսիայէ ըլլայ, ինչպէս արդէն ուրիշ փոխառութիւն մը եղած է Ռուսիոյ կառավարութեան նպաստաւոր պայմաններով։

= Սերպիոյ ելմիոց նախարար Պ. Բօշովիչ հրաժարեցաւ, և Պ. Միլանովիչ յանձնուեցաւ անոր պաշտօնը։

= Ռումանիայէ բազմաթիւ հրեայք ընտանեօք գարձեալ բռկըսած են գաղթել Ամերիկա ու Աւստրալիա, և ճանապարհի ծախուց համար գրեր է Փարիզի՝ Վիէննայի ու Բէրլինի հրէից։ Պատճառ կը համարուի՝ Ռումանիոյ կառավարութեան կողմանէ վերջին օրերս օտարոց և մանաւանդ արհեստաւորաց դէմ հրատարակեալ նոր կանոնադրութիւնն, որ աւելի անդնդատ է հրէից հանդէպ։ Միւս կողմանէ կառավարութիւնը կաշխատի այս գաղթականութեան առաջքն առնուլ, բայց չյաջողիր։

= Եգիպտոսի խառնիճաղթութեան մնայուն բանակին թիւն մինչև 8000 պահել որոշուեր է։ Այդ բանակը Եգիպտոսի ու Սուտանի մէջ պիտի գտնուի, և խորհուրդ չկայ՝ անոնք անկէ հանելու։

ՅՈՒ ԱՅԻ

ՂՈՎՂՈՎԱՍՏՈՒ ԿՅ ՃՆԱՂԶ

ՂՈԿՈՂՈՎԱՍՏՈ ԿՅ ՃՆԱՂԶ

Ս. ՍՏՓՂՈՓՎՏՈ

ՃՈՂՂՂՈՒ ՄՈՒՆ ՄՂՂՆԱՈՈՎ ԿՎՈՍՈՒՍՂ ՄՂՂՆՎԱՈՒ ՃՈՂՂՈՒ

ՏԱՍՆԱՎՃԱՐԱՏ Ս. ՍԻՐԱՑԱՆ ԵՒ ԸՆԿ.
Պատ. խմբագիր Մ. Գ. ՍԱՐԳՍԵԱՆ
Տպարան Վոսկեփորիկ թիւ 38

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ Ս. ՍԱՐԳՍԵԱՆԻ
ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐԱԶԳԱՅԻՆ
ՕՐԱԹԵՐԹ ՕՐԱԳԻՐ
ORIENT HOLLOWAY
ՀՈՒՍԱՐԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
PILULES HOLLOWAY
ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԿԱՎՈՐՈՒԹԻՒՆ
ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԿԱՎՈՐՈՒԹԻՒՆ
ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԿԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԿԱՎՈՐՈՒԹԻՒՆ